ՎՈՒՍԱՆԻՏԱՐ
ՎԵՏԱՀՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ XII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
Պատմ. գիտ. թեկնածու
Մատենադարան

Կիլիկիայի հայկական իշխանաոետության արտաքին քաղաքականության համար կարևոր նշանակություն ունեին նրա հարավային ու արևելյան հարևանները, որոնց ոայմանականորեն կարելի է միավորել «արաբական աշխարհ» հասկացության մեջ, թեև այնտեղ իշխում էին ոչ միայն արաբական, այլև սելջուկյան, լատին և այլ տոհմեր:

Առաջին Ռուբինյանների օրոք, երբ նրանց իշխանությունն ամփոփվում էր Լեռնային Կիլիկիայում, և ոայքար էր ընթանում Դաշտային Կիլիկիային տիրելու համար, հայերի ու խաչակիրների շահերը բախվում էին, սակայն երբ հարցը վերաբերում էր խաչակիրներ-մուսուլմաններ հակամարտությանը, Ռուբինյանները հաճախ դաշնակցում էին Մերձավոր Արևելքի լատին ոետությունների հետ[1]:

Խաչակիրների ու մուսուլմանների ուժերի հարաբերակցության մեջ առաջին լուրջ փոփոխությունը մտցրեց Մոսուլի աթաբեկ Իմադ ալ Դին Զանգին՝ 1144 թ. դեկտեմբերի 24-ին գրավելով Եդեսիան: Դա խաչակրաց Երկրորդ արշավանքի կազմակերոման առիթ դարձավ: Երբ 1146 թ. Զանգին մահացավ, նրա տիրույթները բաժանվեցին երկու մասի. Հալեոը և Հյուսիսային Ասորիքի որոշ գավառներ ժառանգեց նրա որդիներից Նուր ալ Դինը, իսկ Մոսուլը և շրջակա գավառները՝ մյուս որդին՝ Սայֆ ալ Դին Ղազին: Նուր ալ Դինի գահակալման ժամանակաշրջանը (1146-1174) գրեթե համընկավ Ռուբինյան երկու իշխանների՝ Թորոս Բ-ի և նրա եղբայր Մլեհի իշխանության տարիներին:

Թորոս Բ-ի համար կենսական նշանակություն ուներ իր անմիջական հարևաններ Անտիոքի իշխանության և Եդեսիայի կոմսության ճակատագիրը: Ինաբի 1149 թ. ճակատամարտում Անտիոքի իշխանությունը ոարտություն կրեց Նուր ալ Դինից ու կորցրեց որոշ հողեր, սակայն ոահոանեց մայրաքաղաքը: Մյուս լատին ոետությունը մայրաքաղաք Եդեսիան կորցնելուց հետո մի քանի տարի ևս գոյատևեց՝ կենտրոն ունենալով Թլոաշարը (Թալլ Բաշիրը), բայց շարունակեց կոչվել Եդեսիայի կոմսություն: Վերջաոես, 1149-1151 թթ. Նուր ալ Դին Զանգին և Իկոնիայի սուլթան Մասուդը վերջնականաոես նվաճեցին Եդեսիայի կոմսությունը: Թվում էր՝ կոմսության մնացորդների բախտը վճռված

է, սակայն խաչակիրների դիմումին արձագանքելով՝ հարձակման անցավ Բյուզանդիան՝ էլ ավելի խճճելով Եդեսիայի ժառանգության խնդիրը: Բայց սա շատ կարճ տևեց: Բյուզանդացիները զբաղված էին Սիկիլիայի նորմանների դեմ պատերազմով, որից հմտորեն օգտվեց Նուր ալ Դինը՝ 1150 թ. աշնանը ծանր պարտության մատնելով բյուզանդացիների ու խաչակիրների միացյալ ուժերին: Ի վերջո, կոմսության ժառանգությունը 1151 թ. վերջնականապես բաժանվեց Զանգիների և Իկոնիայի սելջուկյան սուլթանության միջև: Որոշ տարածքներ անցան նաև Արտուքյան ամիրներին:

Բյուզանդացիների հետ քաշվելն անուղղակիորեն նպաստեց Թորոս Բ-ի հաջողություններին, քանի որ հենց 1151-1152 թթ. նա իրեն ենթարկեց Դաշտային Կիլիկիան՝ Ռուբինյանների իշխանապետությունը սահմանակից դարձնելով Զանգիների պետությանը:

Թորոս Բ-ի իշխանության կեսերից սկսած՝ հայերը որոշ վերապահությամբ մասնակցեցին խաչակիրների ռազմական գործողություններին: Այդ ընթացքում աստիճանաբար զորեղանում էր Նուր ալ Դինի պետությունը՝ վերածվելով Մերձավոր Արևելքի հզորագույն իշխանության: Նա 1160 թ. Իկոնիայի սելջուկյան սուլթանությունից խլելով Ռաբանը, Քեսունը, Բեհեսնին և Մարաշը, իր պետությունը Կիլիկիային սահմանակից դարձրեց նաև արևելքից:

XII դ. 50-ական թթ. և 60-ականների սկզբին ևս Կիլիկյան Հայաստանը հարաբերություններ էր պահպանում խաչակիր պետությունների հետ՝ հույս ունենալով միացյալ ուժերով դիմագրավել Զանգիներին[2]: Դրանով է բացատրվում հայերի մասնակցությունը՝ խաչակիրների կողմից Շայզար ամրոցի պաշարմանը[3]: Այս հարաբերություններում առաջին լուրջ տարաձայնությունը ծագեց Հարիմի ճակատամարտի ժամանակ, որը որոշ իմաստով կարելի է շրջադարձային համարել Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ: Ճակատամարտը տեղի ունեցավ 1164 թ. օգոստոսի 11-ին՝ Անտիոքից արևելք գտնվող Հարիմ ամրոցի մոտ: Դաշտային Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ Կոստանտին Կալոմանը, Անտիոքի իշխան Բոհեմունդը, Տրիպոլիսի կոմս Ռայմունդը, Թորոս Բ-ն ու Մլեհն իրենց զորքերով մարտի ելան Նուր ալ Դինի դեմ: Ճակատամարտն ավարտվեց վերջինիս կատարյալ հաղթանակով: Դաշնակիցների ղեկավարները, բացառությամբ Թորոսի ու Մլեհի, գերվեցին[4]: Ամենայն հավանականությամբ, Թորոսն ու Մլեհը պարզապես չմասնակցեցին ճակատամարտին կամ սպասողական դիրք բռնեցին: Նման ենթադրության հիմք է տալիս Անանուն Եդեսացու վկայությունը[5]:

Նույն՝ 1164 թ., Թորոս Բ-ը բանակցությունների մեջ մտավ հայ գերիներին ազատելու համար, բայց Ասորիքի տիրակալը հրաժարվեց զիջելուց: Որոշ ժամանակ անց, օգտվելով այն հանգամանքից, որ Նուր ալ Դինը Հարավային Ասո-

ռիքում գրոհում էր ֆրանկների Բանիյաս ամրոցը, Թորոս իշխանը հարձակվեց Զանգիների գերիշխանության տակ գտնվող Մարաշ գավառի վրա և 400 գերի վերցրեց, այդ թվում՝ Մարաշի շրջանում կանգ առած Զանգիների բանակի թուրք ռազմիկներին: Այնուհետև սպառնաց նրանց բոլորին կոտորել, եթե իր պահանջը չբավարարվի: Նուր ալ Դինը չցանկացավ Թորոսի հետ բախվել ու համաձայնեց գերիների փոխանակությանը: Սա Ռուբինյանների իշխանաթեռության և Զանգիների պետության վերջին ընդհարումն էր: Դրանից հետո՝ Թորոս Բ-ի իշխանության վերջին տարիներին, այս երկու պետությունների հարաբերությունները հիմնականում չեզոք բնույթ էին կրում:

XII դ. 60-ական թթ. երկրորդ կեսին թեև Նուր ալ Դինը մեծ մասամբ զբաղված էր Եգիպտոսի համար մղվող պայքարով, բայց նրա ուշադրությունից չէր կարող վրիպել հարևան պետություններում կատարվող անցուդարձը: Այդ տարիներին սրվեցին Թորոս Բ-ի և Մլեհի հարաբերությունները: Իշխանությունը խլելու նպատակով Մլեհը դավադրություն կազմակերպեց: Սակայն դա բացահայտվեց, և Թորոսը ստիպված էր եղբորն արտաքսել երկրից[6]:

Մլեհը գնաց Հալեպ և ծառայության մտավ Նուր ալ Դինի մոտ՝ որպես ավատական տիրույթ ստանալով Կուրիս քաղաքն ու գավառը[7]: Կուրիսը գտնվում էր Այնթաբից հարավ-արևմուտք և Կիլիկիայից բաժանված էր միայն Ամանոսյան լեռներով: Մոտ 5 տարի (1165-1170) Մլեհը տիրեց մեծ մասամբ հայաբնակ այդ գավառին: Երբ 1169-ին Թորոս Բ-ը վախճանվեց, նրան փոխարինեց մանկահասակ որդին՝ Ռուբեն Բ-ը, որին վիճակված էր շատ կարճ իշխել (1169-1170): 1170 թ. Մլեհը Նուր ալ Դինից ստացած օգնական զորաջոկատով մտավ Կիլիկիա և տիրացավ իշխանությանը: Ռուբեն Բ-ն ուղարկվեց Հռոմկլա, որտեղ էլ, շատ չանցած, վախճանվեց: Կիլիկիա մտնելու պահից սկսած՝ Մլեհը դադարեց Նուր ալ Դինի ստորական լինելուց և վերածվեց նրա դաշնակցի, իսկ հետագայում բյուզանդացիներից ու ֆրանկներից գրաված հողերը միացրեց իր պետությանը: Իր իշխանության ընթացքում նա վարում էր բացահայտ հակաբյուզանդական և հակալատին քաղաքականություն: Արտաքին քաղաքականության մեջ Մլեհը հենվում էր ոչ միայն Զանգիների, այլև ուրիշ մուսուլմանական պետությունների վրա՝ նրանց հետ ռազմական դաշինքների մեջ մտնելով: Առաջին նման դաշինքը կնքվեց 1171 թ.՝ Նուր ալ Դինի պետություն–Իկոնիայի սուլթանություն–Դանիշմանյան ամիրություն միավորման հետ: Այս երեք պետությունների հետ Մլեհի դաշինքն աղահով էր դարձնում Ռուբինյան իշխանաթեռության սահմանների մեծ մասը և միաժամանակ հզոր հենարան էր Բյուզանդական կայսրության դեմ պայքարում: Նուր ալ Դինի օգնությամբ Մլեհը 1173 թ. հունվարին վճռական հաղթանակ տարավ բյուզանդական բանակի նկատմամբ և ազատագրեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը:

Մլեհ - Նուր ալ Դին դաշինքը դրսևորվեց նաև այլ հարցերում: Օրինակ՝ Մլեհն ակտիվորեն միջամտեց Դանիշմանյանների ներքին գահակալական հարցերին՝ ռազմական միջամտությամբ դրանք լուծելով հօգուտ Նուր ալ Դինի հովանավորյալի, իսկ Ասորիքի տիրակալն էլ իր հերթին աջակցեց, որպեսզի հայոց կաթողիկոսի երկու թեկնածուներից հաղթի Մլեհի աջակցությունը վայելող Գրիգոր Դ Տղան (1173-1193)[8]:

Մլեհի դիրքը խաչակիրների կողմից գնահատվեց որպես դավաճանություն: 1173 թ. Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ի խնդրանքով Երուսաղեմի Ամալրիկ I թագավորը արշավանք ձեռնարկեց դեպի Կիլիկիա՝ նպատակ ունենալով «պատժել» Մլեհին: Սակայն Նուր ալ Դինը՝ որպես Մլեհի դաշնակից, ռազմարշավ կազմակերպեց Հարավային Ասորիքում՝ Քարաքից հյուսիս, որով Երուսաղեմի թագավորին ստիպեց ընդհատել արշավանքը դեպի Կիլիկիա[9]:

Մլեհի քաղաքականությունը նպաստավոր եղավ Կիլիկիայի համար, սակայն մուսուլման տիրակալի հետ այդքան սերտ դաշինքը բացասաբար ընդունվեց ոչ միայն խաչակիր պետությունների, այլև Կիլիկիայի վերնախավի մի մասի կողմից: 1175 թ.՝ Նուր ալ Դինի մահվանից մեկ տարի անց, Մլեհը դավադրաբար սպանվեց Սսում:

XII դ. 70-ական թթ. կեսերից Ասորիքի, Կիլիկիայի և դրացի երկրների հարևանությամբ հայտնվեց մի ուժեղ պետություն՝ Այյուբյան սուլթանությունը, որի հիմնադիրն էր Սալահ ալ Դին Այյուբին: Նրա հայրը՝ Այյուբը, և հորեղբայրը՝ Շիրքուհը, Նուր ալ Դինի զորավարներից էին:

Սալահ ալ Դինը, շահելով Ֆաթիմյան խալիֆա ալ-Ադիդի (1160-1171) վստահությունը, դարձավ նրա վեզիրը՝ երկրի կառավարումը վերցնելով իր ձեռքը: Ադիդի մահից հետո Սալահ ալ Դինը զավթեց իշխանությունը Եգիպտոսում և դրեց Այյուբյան հարստության հիմքը: Նա ծրագրում էր նախ հպատակեցնել մյուս մուսուլմանական պետությունները, ապա խաչակիրներին ջախջախել ու դուրս մղել Արևելքից: Ընդամենը երկու տարվա ընթացքում (1174-1176) Սալահ ալ Դինն իրեն ենթարկեց Ասորիքի զգալի մասը: Ճիշտ է, Նուր ալ Դինի հաջորդը դեռևս իշխում էր Հյուսիսային Ասորիքում, սակայն նրա պետությունը վերածվել էր Այյուբյաններին ենթակա մի ամիրության, իսկ 1183 թ. վերջնականապես կուլ գնաց Սալահ ալ Դինի պետությանը:

Ահա այս իրավիճակում Ռուբեն Գ-ը մասնակցեց Այյուբյանների դեմ խաչակրաց միացյալ բանակի հերթական անպտուղ արշավանքին 1177-1178 թթ.՝ չորս ամիս պաշարելով Հարիմ ամրոցը: Նույնիսկ հաջող ելքի դեպքում տվյալ ամրոցի գրավումը Կիլիկիային ոչինչ չէր տա, և Ռուբեն Գ-ի միակ նպատակն էր վերականգնել դաշնակցային հարաբերությունները լատինների հետ:

Վերոհիշյալ դեպքերից երկու տարի անց՝ 1180 թ., Սալահ ալ Դինը արշա-

վեց Կիլիկիա: Արշավանքի պատրվակն էր Իկոնիայի սուլթան Կըլըչ Արսլանի (1156-1192) դիմումը, որով նա խնդրում էր համաձայնություն կնքել և գանգատվում էր հայերից[10]: Կըլըչ Արսլանի դժգոհելու պատճառն այն էր, որ Ռուբեն Գ-ը թուրքմեն ցեղերին թույլատրել էր արածեցնել իրենց հոտերը Կիլիկիայում, ապա զղջալով՝ հարձակվել էր նրանց վրա, մի մասին կոտորել, իսկ մնացածներին գերել ու տիրացել նրանց ունեցվածքին[11]: Սալահ ալ Դինի արշավանքը ձեռնարկվեց պատժիչ նպատակներով: Չի բացառվում նաև, որ դրանով Այյուբյան սուլթանը հասկացնում էր Ռուբինյաններին, որ հեռու մնան խաչակրաց հակամուսուլմանական արշավանքներին միանալուց:

Երբ Սալահ ալ Դինի բանակը հասավ Կարահիսար (Հալեպից հյուսիս), նրան միացավ Հալեպի ամիրության զորքը՝ համաձայն 1176 թ. նրանց միջև կնքված դաշնագրի: Ապա սրանց միացավ Իկոնիայի բանակը[12]: Օգնական զորք վերցնելով՝ Սալահ ալ Դինն արշավեց դեպի Սև գետ, որը «Իբն Լևոնի[13] երկրի սահմանն էր կազմում»[14]: Այյուբյան սուլթանը գրավեց Սև գետի շրջանում գտնվող Մանակիր ամրոցը, սակայն ավելի չխորացավ, քանի որ Ռուբեն Գ-ը հաշտություն խնդրեց՝ մեծ քանակությամբ ոսկի տալով ու վերադարձնելով 500 թուրքմեն գերիներին: Դրանից հետո հաշտությունը կնքվեց, ու Սալահ ալ Դինը հետ դարձավ:

Այյուբյան տիրակալը երեք տարի անց՝ 1182-1183 թթ., ներխուժեց Վերին Միջագետք: Շատ չանցած՝ Վերին Միջագետքի մեծ մասը, ինչպես նաև Հյուսիսային Ասորիքը, միացվեցին Այյուբյան սուլթանությանը, որով այդ պետությունը դարձավ Կիլիկյան Հայաստանի անմիջական հարևանը: Մինչև 1186-1187 թթ. Այյուբյան սուլթանը լիովին իրեն էր ենթարկել Վերին Միջագետքը և պատրաստ էր իր գլխավոր խնդրի կատարմանը՝ Երուսաղեմի լատին թագավորության ջախջախմանը: Այդ ամբողջ ընթացքում Կիլիկյան Հայաստանի և Այյուբյան սուլթանության միջև պահպանվեցին խաղաղ հարաբերություններ, կողմերը հետևում էին 1180 թ. կնքված հաշտությանը: Սալահ ալ Դինը 1187-ին, Տիբերիական լճի մոտ՝ Հիթթին կոչվող վայրում, ծանր պարտության մատնեց Երուսաղեմի թագավոր Գի դը Լուսինյանի բանակը: 1187 թ. հոկտեմբերի 2-ին Երուսաղեմը գրավված էր: Դրանից հետո Այյուբյանները կարճ ժամանակում նվաճեցին գրեթե ամբողջ Պաղեստինը: Դա նշանակում էր, որ Այյուբյանների նոր նվաճումների նշանակետ կարող էր լինել նաև Կիլիկիան, որը հենց այդ տարիներին աստիճանաբար վերածվում էր Արևելյան Միջերկրականի ամենաուժեղ քրիստոնյա պետության:

Սալահ ալ Դինը, գրավելով Երուսաղեմը և Պաղեստինի մեծ մասը, շարունակեց պայքարը մյուս լատին պետությունների դեմ: Տրիպոլիսի կոմսությունն ու Անտիոքի իշխանությունը 1188 թ. ենթարկվեցին Այյուբյան սուլթանին՝ իրենց գոյությունը պահպանելով ստորակայական վիճակում[15]:

Երուսաղեմի անկման լուրը ծանր տպավորություն թողեց Եվրոպայում և խաչակրաց երրորդ արշավանքի (1189-1192) կազմակերպման առիթ դարձավ: Արշավանքը ղեկավարում էին եվրոպական երեք միապետներ: Անգլիայի Ռիչարդ I Առյուծասիրտ (1189-1199) և Ֆրանսիայի Ֆիլիպ II Օգյուստ (1180-1223) թագավորների միացյալ բանակը նավերով տեղափոխվեց Պաղեստին և պաշարեց Աքքան, իսկ Հռոմեական սրբազան կայսրության տիրակալ Ֆրիդրիխ I Շիկամորուսը (1155-1190) շարժվեց ցամաքային ճանապարհով: Կայսեր բանակն Իկոնիայի սելջուկյան սուլթանության մայրաքաղաքից երեք անգամ դեսպաններ ուղարկեց Լևոն Բ-ի (1187-1219) մոտ, բայց որևէ պատասխան չստացավ[16]: Կաթողիկոսը շտապեց Սիս մայրաքաղաք՝ Լևոն իշխանաղետի հետ հետագա քայլերի մասին խորհրդակցելու նպատակով: Արդյունքում Ֆրիդրիխ I-ին նամակով պատասխանեց Գրիգոր Դ կաթողիկոսը (1173-1193): Լևոն Բ-ը զգուշավոր դիրք բռնեց Ֆրիդրիխ I-ի հանդեպ և աշխատեց չհանդիպել նրան՝ միաժամանակ չցանկանալով իր դեմ գրգռել Սալահ ալ Դինին:

Հետաքրքիր փաստ է, որ նույն Գրիգոր Դ կաթողիկոսը զուգահեռաբար մի այլ նամակ էլ ուղարկեց Սալահ ալ Դինին, որտեղ նկարագրում էր գերմանացիների առաջխաղացումը մինչև Կիլիկիա, նրանց բախումները բյուզանդացիների, թուրքմենների և Իկոնիայի սելջուկների հետ, ապա աշխատում էր ամեն կերպ իրեն ու Լևոն Բ-ին ներկայացնել որպես Սալահ ալ Դինի բարեկամ ու դաշնակից[17]: Պահպանվել է վկայություն Այյուբյան սուլթանին ուղղված նաև մի երկրորդ նամակի մասին, որով կաթողիկոսը տեղեկություններ էր հաղորդում խաչակիրների հետագա առաջխաղացման և նրանց վիճակի մասին[18]: Բանն այն է, որ Սալահ ալ Դինն էլ այդ ժամանակ գտնվում էր իր հզորության գագաթնակետին և ցանկացած պահի կարող էր ներխուժել Կիլիկիա: Ավելին, Հռոմկլան՝ հայոց կաթողիկոսանիստը, ամբողջովին շրջապատված էր Այյուբյանների տիրույթներով:

Խաչակիրների անհաջողությունների հետևանքով Կիլիկիան ոչ միայն ազատվեց խաչակրաց հսկա բանակի վտանգավոր ներկայությունից, այլև մի փոքր ընդարձակեց իր իշխանաղետության սահմանները՝ տիրանալով Բաղրաս շատ կարևոր ամրոցին[19], օգտվելով այն հանգամանքից, որ Այյուբյաններն այնտեղից հետ էին քաշվել:

1192 թ. սեպտեմբերի 2-ին Ռամլայում խաչակրաց երրորդ արշավանքի ղեկավարների և Սալահ ալ Դինի միջև հաշտություն կնքվեց, համաձայն որի՝ խաչակիրները վերստացան Աքքայից մինչև Հոբբե (Յաֆֆա) ընկած ծովափը: Սակայն նրանք չկատարեցին իրենց գլխավոր խնդիրը. Երուսաղեմն այդպես էլ չվերագրավվեց[20]: Սալահ ալ Դինը (1171-1193) մնաց դրության տերը և առաջվա պես իշխում էր մի հսկա տերության, որը ձգվում էր Տավրոսի լեռներից մինչև

Լիբիական անապատ: Նա վերջնականապես թուլացրել էր խաչակիրներին՝ նրանց թողնելով միայն ծովափնյա մի նեղ շերտ: Դրանով Կիլիկիայի վիճակը բարդանում էր. եթե մինչև այդ Սալահ ալ Դինն աշխատում էր մեղմ վարվել տեղական քրիստոնյաների (հայեր, ասորիներ և այլն) հետ՝ այդ կերող փորձելով նրանց հեռու պահել խաչակիրներից (այդպես եղավ, օրինակ, Երուսաղեմի գրավման ժամանակ), ապա այժմ արդեն նա դրա կարիքը չէր զգում: Սալահ ալ Դինի նվաճողական ծրագրերի մասին է պատմում Իբն ալ-Ասիրը: Ըստ պատմիչի՝ նա որոշել էր զավթել Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, Մեծ Հայքի մի մասը, Ատրպատականը և մինչև իսկ Իրանը[21]՝ այդ ընթացքում առաջին հերթին վերացնելով Ռուբինյան իշխանապետությունը:

Ըստ Սմբատ Սպարապետի Տարեգրքի՝ իր իշխանության վերջին տարում (1193 թ.) Սալահ ալ Դինը պատվիրակ է ուղարկում Լևոն Բ իշխանի մոտ՝ պահանջելով հանձնել Կիլիկիան և անձամբ ներկայանալ իրեն: Լևոնը, հաշտության հնարավորություններ չտեսնելով, մի կողմ թողնելով դիվանագիտությունը, հետևյալ պատասխանն է տալիս պատվիրակին. «Ասա ցսուլտանն թէ երկիր ոչ ունիմ տալ քեզ, բայց եթէ գայցես յերկրիս իմում տաց քեզ յերկսայրից ըմպելիս, որպէս հաւատակցին քո Ռոբստոմի»[22]: Այսպիսի համարձակ պատասխան ստանալով՝ սուլթանը, որ, ըստ Սմբատ սպարապետի, «մռմռէր որպես զառիւծ»[23], զորքով հարձակվում է Կիլիկիայի վրա: Այյուբյանների բանակը հասնում է մինչև Սև գետ, բայց այստեղ Սալահ ալ Դինը հանկարծակի հիվանդանում է ու մահանում[24]:

Արաբ հեղինակները նշում են, որ Այյուբյան հզոր տիրակալը մահացել է Դամասկոսում՝ իր մահճում: Ուստի եթե երկու միապետների միջև նամակագրության վերաբերյալ Սմբատի հաղորդմանը կարելի է հավատ ընծայել, ապա անձամբ սուլթանի գլխավորությամբ բանակի հարձակումը Կիլիկիայի վրա՝ գրեթե անհավանական է: Բացառված չէ, որ 1193 թ. Կիլիկիայի վրա արշավողը ոչ թե անձամբ Սալահ ալ Դինն էր, այլ նրա զորավարներից մեկը, ընդ որում, ոչ թե Դամասկոսից, այլ Հալեպի կողմից: Նման ենթադրությանն անուղղակի նպաստում է նույն Սմբատի հետևյալ միտքը. «Եւ նստաւ յաթոռ նորա որդին իւր որ կոչէր Մելեք Տահր»[25]: Այսինքն, որպես Սալահ ալ Դինի հաջորդ հիշվում է Հալեպի տիրակալ ալ-Մալիք ալ-Զահիրը (որը դեռ 1183-ից կառավարում էր այնտեղ) և ոչ թե Դամասկոսի կամ Կահիրեի Այյուբյանները:

Սալահ ալ Դինի մահից հետո Այյուբյան հսկա տերությունը բաժանվեց մի քանի մասի, և Կիլիկիան ազատվեց վտանգավոր թշնամուց: Այյուբյան սուլթանության տրոհումն այն պայմաններից մեկն էր, որը նպաստեց XII դ. վերջին (1198) Կիլիկիայի Հայոց թագավորության հռչակմանը:

1 Տե՛ս *Մատթէոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 342:

2 Էռնուլ պատմիչը հետաքրքիր տեղեկություն է հաղորդում այն մասին, որ Թորոս իշխանը, որպես ուխտավոր լինելով Պաղեստինում և նկատելով Երուսաղեմի թագավորությունում քրիստոնյաների փոքրաթիվ լինելը, Ամալրիկ I (1162-1173) թագավորին առաջարկում է Կիլիկիայից տեղափոխել և Երուսաղեմի թագավորությունում բնակեցնել 30 հազար մարտունակ ռազմիկների իրենց ընտանիքների հետ, որը, սակայն, չի իրականանում տեղի լատին հոգևորականության առաջադրած դավանաբանական պահանջների պատճառով (տե՛ս *Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier*, par M. L. de Mas Latrie, Paris, 1871, էջ 27-30):

3 Տե՛ս William of Tyre, *A History of deeds done beyond the Sea*, vol. II, translated and annotated by E. A. Babcock and A.C. Krey, New York, 1943, էջ 266-268:

4 Abu Shama, Des deux Jardins, "Recueil des historiens des croisades", *Historiens Orienteax*, t. IV, Paris, էջ 108-109, (այսուհետև՝ Abu Shama); Տե՛ս նաև Kamal ad-Din Ibn al-Adim, *Histoire d'Alep par Kamal ad-Din Ibn al-Adim*, edited Sami Dahan, t. II, Damas, 1954, էջ 319:

5 Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, 12, թարգմ.՝ Լ. Տեր-Պետրոսյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1982, էջ 122-123:

6 Տե՛ս *Սմբատայ Սպարապետի Տարեգիրք*, աշխատասիրութեամբ Հ. Սերովբէ Ագըլեանի, Ս.Ղազար, Վենետիկ, 1956, էջ 135; *Տեառն Միխայէլի պատրիարքի ասորւոց ժամանակագրութիւն*, Յերուսաղէմ, 1870, էջ 455:

7 *Սմբատայ Սպարապետի Տարեգիրք*, էջ 187:

8 Տե՛ս Michel le Syrien, *Chronique de Michel le Syrien*, tr. en français par J.-B. Chabot, Bruxelles, 1963, t. III, էջ 353-355:

9 Տե՛ս Bar Hebraeus, *The Chronography of Bar Hebraeus Gregory Abu-l-Faraj*, tr. by E. Budge, Amsterdam, 1976, էջ 288; տե՛ս նաև Cahen C., *La Syrie du Nord à l'époque des Croisades et la Principauté franque d'Antioche*, Paris, 1940, էջ 414:

10 Ibn Challikan, *Biographical Dictionary*, vol. III, New York, 1868, p. 342; Տե՛ս նաև *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին*, Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ, կազմեց Հ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 293:

11 *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին*, էջ 301; «Իբն ալ Ասիր», թարգմ., առաջաբան և ծանոթագր.՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, 11, *Արաբական աղբյուրներ*, Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1981, էջ 266:

12 Տե՛ս Abu Shama, *Ar-Raudatayn fi achbar ad-dawlatayn*, Beyrouth, 1974, էջ 211-213:

13 «Իբն Լևոն» անվանումն արաբ պատմիչները տվել են բոլոր Ռուբինյաններին:

14 *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին*, էջ 301; Իբն ալ-Ասիր, էջ 266:

15 Lane-Poole S., *History of Egypt in the Middle Ages*, London, 1901, էջ 208:

16 *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ*, Վենետիկ, 1862, էջ 136:

17 *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին*, էջ 294-298:

18 Նույն տեղում, էջ 299-300: Գրիգոր Դ Տղայի՝ Սալահ ալ Դինին ուղարկած նամակի (կամ նամակների) մասին տեղեկությունը երկար ժամանակ համարվում էր կեղծ կամ ոչ վավերական, սակայն ներկայումս փաստված է դրանց վավերականությունը (տե՛ս Տեր-Ղևոնդյան Վ., *Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ.*, Եր., 1994, էջ 99-103; Mutafian C., *La diplomatie arménienne au Levant a l'époque des croisades XII-XIV siecle*. These de doctorat, Université Paris I, Pantheon-Sorbonne, Juin, 2002, էջ 68; Տեր-Պետրոսյան Լ., *Խաչակիրները եւ հայերը*, հտ. Ա, հտ. Բ, Եր., 2007, Տեր-Ղևոնդյան Վ., «Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դ. վերջին», *Պատմա-բանասիրական հանդես*, 2010/1, էջ 114-128):

19 Grousset R., *Histoire des Croisades et du royaume franc de Jerusalem*, Paris, 1936, vol. III, էջ 16:

20 Lane-Poole S., *History of Egypt...*, էջ 211:

21 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 278-279:

22 *Սմբատայ Սպարապետի Տարեգիրք*, էջ 204:

23 Նույն տեղում:

24 Նույն տեղում:

25 Տե՛ս նույն տեղում:

THE RUBENID PRINCIPALITY AND THE ARAB WORLD IN THE II HALF OF THE XII CETNTURY

VAHAN TER-GHEVONDIAN
PhD in History
Matenadaran

In the foreign policy of Cilician Armenian principality its southern and eastern neighbors - Arab countries (with their Christian and Muslim states) played an important role. In the first half of the XII c., the Rubenids were mostly cooperating with the crusaders. However, after the fall of Edesse in 1144, the correlation of forces started to change. It was non-random, that under Thoros II (1145-1169), during the confrontation of Zengids with crusaders in the battle of Harim (1164), Armenians hold a neutral position, and under the prince Mleh (1170-1175), became close allies of Nur al-Din (1146-1174). Ruben III (1175-1187) attempted to revive relationship with crusaders, which was noticed by Salah al-Din (1171-1193), the founder of Ayyubid sultanate of Egypt, who in 1180 attacked a border fortress of the Rubenid principality. Eventually a peace treaty was signed, which, with one or two exceptions, was maintained up to the death of the sultan. Levon II's (1187-1198) foreign policy was more flexible. In 1190, during the confrontation of crusaders and Salah al-Din, through actions coordinated with catholicos Grigor IV (1187-1198), he managed not only to preserve Cilician Armenia from the assaults of the two huge armies, but also to broaden his territory. In 1193 Salah al-Din's sultanate was divided into smaller parts, so Cilicia got rid of a dangerous neighbor. That was one of the conditions that contributed to the declaration of Cilician kingdom in 1198.

КНЯЖЕСТВО РУБЕНИДОВ И АРАБСКИЕ СТРАНЫ ВО II ПОЛОВИНЕ XIIв.

ВААН ТЕР-ГЕВОНДЯН
кандидат исторических наук
Матенадаран

В вопросе внешней политики Киликийского Армянского княжества важную роль играли его южные и восточные соседи – арабские страны, на территории которых существовали как христианские так и мусульманские государства. В первой половине XIIв. Рубениды в основном союзничали с крестоносцами. Однако после падения Эдессы в 1144г. соотношение сил стало меняться. Не случайно, что в перод правления Тороса II (1145-1169) во время противостояния Зенгидов с крестоносцами в битве при Хариме в 1164г., армяне заняли нейтральную позицию, а впоследствии, в период правления Млеха (1170-1175), стали близкими союзниками государства Нур ал-Дина (1146-1174). Рубен III(1175-1187) предпринял попытку возобновить отношения с латинянами, что не осталось незамеченным со стороны основателя недавно созданного Аййубидского султаната Салах ал-Дина (1171-1193), который в 1180г. напал на одну из приграничных крепостей княжества Рубенидов. В конечном итоге был подписан мирный договор, который, с одним-двумя исключениями, соблюдался до самой смерти султана. С точки зрения дипломатии, наиболее гибкую политику вел Левон II (1187-1198), который в 1190г., во время противостояния крестоносцев и Салах ал-Дина, сумел с помощью действий, согласованных с католикосом Григором IV (1173-1193), не только спасти Киликийскую Армению от нападения двух огромных армий, но даже несколько расширить территорию своей страны. После смерти Салах ал-Дина его держава распалась на несколько частей, и Киликия избавилась от опасного соседа. Распад Аййюбидского султаната стал одним из условий, способствовавшим провозглашению Киликийского царства в 1198г.